

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՏՄ-ՄԱԾՁԲ-26/05**

ք. Իջևան

«5» փետրվարի 2026թ.

«ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը», ի դեմս գլխավոր քարտուղար Արման Գևորգյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մելիք Ահարոնյան ԱԶ-ն, ի դեմս տնօրեն Մելիք Ահարոնյանի, որը գործում է ԱԶ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:1

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.2

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

1 Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա «մատուցվում է» բառից հետո լրացվում է « քաղաքաշինական նորմատիվադեֆինիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և» բառերը

2 Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա 2.1.2 կետի «ա» պարբերությունը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ. «Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պարզաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պարզաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը.»:

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման թափանցիկ գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի նախատման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:³

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _____2___ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____5___ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 510100 (հինգ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-

³ Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա պայմանագրի նախագծի 3.1 կետը 2-րդ նախադասությունից հետո լրացվում է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ, «Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվադեֆինիկական և հաստատված նախագծանախնաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ: Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:»:

համան արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:4

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:5 Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, զործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

4 Գանձապետարանում հաշիվներ չունեցող պարավորությունների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

5 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է ներդրվում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:6

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկներ կայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

6 Պեղական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

որն ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի վարչությանն այն փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը⁷

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 25 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
«Հ Տ ա վ ո շ ի մ ար գ պ ե տ ի ա շ խ ա տ ա կ ա զ մ
Հ ա ս գ ե ' ք . Ի ջ լ ա ն , Ս ա հ մ ա ն ա դ ր ու թ յ ա ն 1
Հ Հ Ֆ ն գ ր ծ ա ղ ն ա կ ա ն վ ար չ ու թ յ ու ն
900371051039
07628257
Արման Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Ա Ձ Մ ե լ ի ք Ա հ ար ո ն յ ա ն
Հ ա ս գ ե ' ք . Ի ջ լ ա ն , Արցախյան 4/3
Կոնվերս Բանկ ՓԲԸ
1930045519020100
70930303
Մելիք Ահարոնյան
/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

⁷ Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրաբու, ապա սույն կետը խմբագրվում է՝ «վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական փախու» բառերով:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության			մատուցման	
			չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը*
1	50111130-1	ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ, ստորև	դրամ	510100	1	ք.Իջևան, Սահմանադրության 1	25.12.2026 թ.

Հ/Հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները/տեսակները/	
		Տոյոտա Քեմրի արտադրված 2014թ.,	Նիսսան Սենտրա արտադրված 2013թ.,
1	2	3	4
		Մեկ միավորի համար նախատեսված առավելագույն գներ - գնացուցակ /ՀՀ դրամ/	
	1. Ծարժիչ		
1	Ծարժիչի հանում և տեղադրում	40000	40000
2	Ծարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	120000	120000
3	Ծարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	25000	25000
4	Ծարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	15000	15000
5	Ծարժիչի գլխիկի փականի փոխարինում հղկումով և խտարուկերով	5000	5000
6	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	3000	3000
7	Ծարժիչի փականների զսպանակների փոխարինում	3000	3000
8	Փականների խցուկնի փոխարինում	3000	3000
9	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	2000	2000
10	Ծարժիչի միսոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	50000	50000
11	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	35000	35000

12	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	8000	8000
13	Ծնկաձև լիսեռի ուղղում	8000	8000
14	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	12000	12000
15	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	12000	12000
16	Շարժիչի գլանի փոխարինում (гвоздка)	17000	17000
17	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000
18	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	10000	10000
19	Փոկանիվի փոխարինում	5000	5000
20	Շարժիչի շղթայի փոխարինում	25000	25000
21	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	10000	10000
22	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	7000	7000
23	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	5000	5000
24	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	3000	3000
25	Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում	10000	10000
26	Յուղի ծորակի փոխարինում	1500	1500
27	Օդաքաշակ փողրակի փոխարինում	3000	3000
28	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
29	Շարժիչի կափույրի փոխարինում	12000	12000
30	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	12000	12000
31	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	9000	9000
32	Ատամնանիվի փոխարինում	1500	1500
33	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	1000	1000
34	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	12000	12000
35	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	8000	8000
36	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	8000	8000
37	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	10000	10000
38	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	10000	10000
39	Գլխիկի հեղույսի փոխարինում	500	500
40	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	1000	1000
41	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	18000	18000
42	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	12000	12000
43	Շարժիչի քիմիական լվացում 1 կտորը	2500	2500
44	Կափույրի բնիկի նորոգում /գնեգոն/	1500	1500
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
45	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	1000	1000
46	Ավտոմեքենայի հանգույցների յուղում	1000	1000
47	Համակարգչային ախտորոշում	4000	4000
48	Յուղի ռադիատորի փոխարինում	5000	5000
49	Յուղի ռադիատորի նորոգում	1000	1000
50	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	5000	5000
51	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	5000	5000
52	Վառոցքի մոմի փոխարինում 1 հատ	500	500
53	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	7000	7000
54	Օդի գտիչի փոխարինում	300	300
55	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1200	1200
56	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	750	750
57	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	1000	1000
58	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	5000	5000
59	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	10000	10000
60	Բոցամուղի կողավորում	1000	1000
61	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	1000	1000
62	Բենզամղիչի փոխարինում	5000	5000
63	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1500	1500

64	Ղեկավարման բյուրի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
65	Ղեկավարման բյուրի վերանորոգում	10000	10000
66	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	7000	7000
67	Վառելիքի բաքի մաքրում	2000	2000
68	Օդի ծախսի տվյալի փոխարինում	5000	5000
69	Ջրի ջերմաստիճանի տվյալի փոխարինում	4000	4000
70	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	1000	1000
71	Բենզոբաքի բենզոմոնիտի ցանցի փոխարինում	500	500
72	Բենզոբաքի բենզոմոնիտի ցանցի մաքրում	100	100
73	Յուղի ճնշման տվյալի փոխարինում	1000	1000
74	Տվյալի փոխարինում	1000	1000
75	Ակսիալատորի փոխարինում կամ նորոգում	3000	3000
76	Օդագոյի իրանի փոխարինում	1500	1500
77	Էլ.բենզոմոնիտի կախոցի փոխարինում	1000	1000
3. Սառեցման և արտածման համակարգ			
78	Հովհարի փոխարինում	3000	3000
79	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000	1000
80	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	7000	7000
81	Ռադիատորի նորոգում	25000	25000
82	Ընդարձակող բաքի փոխարինում	1000	1000
83	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1000	1000
84	Ջրի ծորակի փոխարինում	3000	3000
85	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	1000	1000
86	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
87	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	25000	25000
88	Վառարանի ռադիատորի նորոգում	3000	3000
89	Վառարանի շարժիչի փոխարինում	7000	7000
90	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	3000	3000
91	Ջեռուցիչի իրանի փոխարինում	3000	3000
92	Թերմոստատի փոխարինում	4000	4000
93	Ջրի մոնիտի փոխարինում միջադիրով	7500	7500
94	Ջրի մոնիտի միջադիրի փոխարինում	7500	7500
95	Գեներատորի փոկի փոխարինում	1500	1500
96	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	3000	3000
97	Ջրի ռադիատորի վերանորոգում	25000	25000
98	Թերմոստատի միջադիրի փոխարինում	4000	4000
99	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	3000	3000
100	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	1000	1000
101	Խլարարի ներդիրի փոխարինում	3000	3000
102	Խլարարի կախոցի փոխարինում	3000	3000
103	Հովացման հեղուկի փոխարինում	2500	2500
104	Դիֆուզորի փոխարինում	5000	5000
105	Կոնդիցիոների լիցքավորում	8000	8000
106	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում	12000	12000
107	Կոնդիցիոների ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	4500	4500
108	Կոնդիցիոների առանցքակալի հանում և տեղադրում	4500	4500
109	Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում	12500	12500
110	Կոնդիցիոների կալուճակի հանում և տեղադրում	6500	6500
4. Փոխանցման տուփ			
111	Փոխանցման տուփի յուղի զտիչի փոխարինում	10000	10000
112	Փոխանցման տուփի յուղի փոխարինում	10000	10000
5. Բաշխիչ տուփ			
113	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները		
114	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում		

115	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում		
116	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում		
117	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում		
118	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում		
119	Բաշխիչ տուփի շարժարների փոխարինում		
120	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում		
121	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում		
122	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում		
123	Բաշխիչ տուփի երկժանի փոխարինում		
124	Բաշխիչ տուփի բարձրիկի փոխարինում		
125	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում		
126	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում		
127	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում		
128	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում		
129	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում		
130	Տվիչի փոխարինում		
131	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում		
132	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում		
133	Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում		
6. Առջևի և հետևի կամրջակներ			
134	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում		
135	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում		
136	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում		
137	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում		
138	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում		
139	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում		
140	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում		
141	Կամրջակի տվիչի փոխարինում		
142	Առջևի կիսաստնիները միացնող հանգույցի փոխարինում		
7. Կախոց			
143	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
144	Առջևի անվակուղի առանցքակալի փոխարինում	5000	5000
145	Առջևի անվակուղի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000
146	Հետևի անվակուղի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000
147	Հետևի անվակուղի առանցքակալի փոխարինում	5000	5000
148	Անվակուղի գամաստղի և հեղուսի փոխարինում (մեկ անիվի համար)	5000	5000
149	Չախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	3000	3000
150	Չախ կամ աջ հողակապի նորոգում	10000	10000
151	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոցի փոխարինում	5000	5000
152	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	6000	6000
153	Առջևի զսպանակի փոխարինում	10000	10000
154	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000	6000
155	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	6000	6000
156	Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում	6000	6000
157	Մեղմիչի երկարժե համաձուլվածքով վռանի փոխարինում	6000	6000
158	Ներքևի թմակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
159	Ներքևի թմակի վռանների փոխարինում 1 հատ	5000	5000
160	Ներքևի թմակի հեղույսի փոխարինում	2000	2000
161	Հարվածիչի (բարձիկի) փոխարինում	7000	7000
162	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	4000	4000

163	Գնդե հողակապերի փոխարինում	5000	5000
164	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
165	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5000	5000
166	Հետևի կախոցի անվաքացքի կարգավորում	6000	6000
167	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	3000	3000
168	Կայունարարի կայունակի փոխարինում	3000	3000
169	Հետևի զսպանակների փոխարինում	10000	10000
170	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000	6000
171	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000
172	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	6000	6000
173	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1 հատ	3500	3500
174	Անվակունդի դարձովի կանգնակի փոխարինում	6000	6000
175	Աջ կամ ձախ դարձկեն լծակի փոխարինում	6500	6500
8. Ղեկային մեխանիզմ			
176	Ղեկայունակի հիմնական նորոգում,	50000	50000
177	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	8000	7000
178	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	4000	4000
179	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500	7500
180	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	7000	7000
181	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	16000	16000
182	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
183	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	10000	10000
184	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	10000	10000
185	Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000	6000
186	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	4000	4000
187	Ղեկային ձգաձողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	8000	8000
188	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	2500	2500
189	Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում	3500	3500
190	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	5000	5000
191	ՂԿ ձողի տեղաշարժի մեխանիզմի փոխարինում	5000	5000
192	Հիդրոուժեղարարի յուղի տարայի փոխարինում	2000	2000
9. Արգելակային համակարգ			
193	Վակումային ուժեղարարի փոխարինում	20000	20000
194	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	5000	5000
195	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000
196	Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	10000	10000
197	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000
198	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	7000	7000
199	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000	4000
200	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000	4000
201	Առջևի սուպպորտի վերանորոգում	5000	5000
202	Հետևի սուպպորտի վերանորոգում	5000	5000
203	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	7500	7500
204	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	10000	10000
205	Արգելակային փողրակի փոխարինում	7000	7000

206	Արգելակային կոճղակների փոխարինում	3000	3000
207	Արգելակային համակարգի օդահանում	3000	3000
208	Թմբուկային կոճղակների փոխարինում	4500	4500
209	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000	4000
210	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	6000	6000
211	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	6000	6000
212	Հետևի արգելակային թմբուկի հղկում 1 հատ	1000	1000
213	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
214	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	5000	5000
215	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
216	Արգելակային հեղուկի փոխարինում	3000	3000
10. Էլեկտրասարքավորում			
217	Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	10000	10000
218	Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում	10000	10000
219	Գեներատորի ստատորի փոխարինում	3000	3000
220	Գեներատորի ռոտորի փոխարինում	3000	3000
221	Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում	3000	3000
222	Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում	3000	3000
223	Գեներատորի առանցքակալի փոխարինում	3000	3000
224	Գեներատորի փոկանիվի փոխարինում	5000	5000
225	Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում	10000	10000
226	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	2000	2000
227	Մեկնարկիչի իրանի փոխարինում	2000	2000
228	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	2000	2000
229	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	2000	2000
230	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	2000	2000
231	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	2000	2000
232	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	2000	2000
233	Ազդանշանի կարգավորում	2000	2000
234	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000	2000
235	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
236	Մարքերի պանելի հանում և տեղադրում	5000	5000
237	Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000
238	Առջևի լապտերների կարգավորում	5000	5000
239	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5000	5000
240	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	500	500
241	Վազքաչափի փոխարինում	5000	5000
242	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	7000	7000
243	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	7000	7000
244	Ապակեվացիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	500	500
245	Ապակեվացիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	7000	7000
246	Ապահովիչների փոխարինում	100	100
247	Ապակեամբարձիչների փոխարինում	3000	3000
248	Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում	3500	3500
249	Էլեկտրական տվիչների փոխարինում	1500	1500

250	Տվիչի փոխարինում	1500	1500
251	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1500	1500
252	Մարտկոցի փոխարինում	1000	1000
253	Ալյումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	1000	1000
254	Ալյումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	1000	1000
255	Էլեկտրական կոճակի փոխարինում	500	500
256	Էլեկտրական շտեյկերի փոխարինում	500	500
257	Ջրի ցողիչի փոխարինում	500	500
258	Գեներատորի կռաշտեինի փոխարինում	1500	1500
259	Գեներատորի դիմացի կամ հետևի իրանի փոխարինում	1500	1500
260	Մեկնարկիչի առջևի իրանի փոխարինում	1500	1500
261	Լոքի փոխարինում	3000	3000
262	Ցուցիչի փոխարինում	3000	3000
263	Պրիբորի լամպի փոխարինում	500	500
264	Հետևի լամպերի պանելի փոխարինում	500	500
265	Էլ. լարերի վերանորոգում	3500	3500
11. Ավտոմեքենայի սրահ			
266	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	1500	1500
267	Նստարանի հանում տեղադրում կամ փոխարինում	3000	3000
268	Նստատեղի վերանորոգում	5000	5000
269	Սրահի պաստառապատում	15000	15000
270	Սրահի ձայնամեկուսացում	25000	25000
271	Ապակիների մզեցում թաղանթով	25000	25000
272	Լամպի փոխարինում	350	350
273	Ամրակներ (կլիպս) փոխարինում 1 հատ	50	50
274	Դիմապակու փոխարինում	10000	10000
275	Դռների ապակիների փոխարինում	5000	5000
276	Հետևի ապակու փոխարինում	5000	5000
277	Ավտոմեքենայի թափքի հղկում, ներկում և փայլեցում գին 1 կտորի համար	35000	35000
278	Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում գին 1 կտորի համար	5000	5000
279	Եռակցման աշխատանքներ գին 1սմ համար	300	300
280	Խառատային աշխատանքներ գին 1 կտորի համար	1500	1500
281	Փականագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար	1500	1500
282	Ավտոմեքենայի շարժիչի լվացում	5000	5000
283	Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում	10000	10000
284	Անիվի հանում և տեղադրում	500	500
285	Անվադողի վերանորոգում	500	500
286	Անվադողի փոխարինում հանում տեղադրումով	500	500
287	Անիվի բալանսավորում	500	500
288	Անիվի վալց	5000	5000
289	Ավտոմեքենայի սրահի չոր քիմ մաքրում	20000	20000
290	Քարշարկի ծառայություն 1 կմ-ի համար	500	500
291	Հագոցի փականի փոխարինում	5000	5000
292	Ավտոմեքենայի հագոցի պետլիի փոխարինում	4000	4000
293	Բեռնախցիկի զսպանի փոխարինում	1500	1500

294	Բեռնախցիկի մեղմիչի փոխարինում	1500	1500
295	Պաշտպանիչի փոխարինում 1 հատը	5000	5000
296	Գորգիկի փոխարինում 4 հատը	200	200
Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, կյուրերի և այլ օժանդակ կյուրերի անվանումները			
1. Շարժիչ			
1	Շարժիչի գլխիկ	85000	80000
2	Բարձիկ	15000	15000
3	Շարժիչի գլխիկի միջադիր	10000	10000
4	Շարժիչի միջադիրների կոմպլեկտ	20000	20000
5	Շարժիչի փական դուրս մղող	5000	5000
6	Շարժիչի փական ներս մղող	5000	5000
7	Շարժիչի փականի խտաբուկ	2000	2000
8	Փականի զսպանակ	2000	2000
9	Ծնկաձև լիսեռ	50000	50000
10	Ծնկաձև լիսեռի խտաբուկ առջևի	5000	5000
11	Ծնկաձև լիսեռի խտաբուկ հետևի	5000	5000
12	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	15000	15000
13	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	15000	15000
14	Մխոց	20000	20000
15	Մխոցային օղակներ	20000	20000
16	Մխոցային մատ	2000	2000
17	Ատամնանիվ	1000	1000
18	Ատամնավոր փոկ	10000	10000
19	Շարժիչի կափույր	15000	15000
20	Շարժիչի կափույրի կափարիչ	10000	10000
21	Շարժիչի շղթա	10000	10000
22	Շարժիչի պաշտպանիչ	15000	15000
23	Փոկի ձգիչ	12000	12000
24	Հիդրոձգան	5000	5000
25	Հրիչ	5000	5000
26	Շարժիչի հիդրոհրիչ	5000	5000
27	Շարժիչի կալուն	9000	9000
28	Շարժիչի հանդարտիչ	15000	15000
29	Շարժիչի հողովակ	17000	17000
30	Շարժիչի հողովակի առանցքակալ	4000	4000
31	Շարժիչի առջևի կափարիչ	5000	5000
32	Շարժիչի վերևի կափարիչ	5000	5000
33	Շարժիչի վերևի կափարիչի միջադիր	5000	5000
34	Թափանիվ	1000	1000
35	Շարժաթև	6000	6000
36	Ատամնանիվ բաշխիչ լիսեռի	20000	22000
37	Ատամնանիվ ծնկաձև լիսեռի	11000	12000
38	Փոկանիվ ծնկաձև լիսեռի	12000	12000
39	Փոկանիվ	8000	8000
40	Սուխարիկ փականի	800	1000

41	Գլխիկի բոլս	3000	3000
42	Ծնկաձև լիսեռի բոլս	2500	2000
43	Պարկուճ	2500	2500
44	Քարտեր	15000	15000
45	Խուփ ընդարձակման բաքի	2500	2500
46	Խուփ շարժիչի	3500	3600
47	Թաթիկ յուղի մղիչի	3500	3200
48	Բարձիկ փ/տուփի	22000	23000
49	Յուղի մղիչ	20000	22000
50	Միջադիր յուղի մղիչի	4700	3900
51	Յուղի ծորակ	3100	3200
52	Շարժիչի յուղի արանքաչափիչ	3000	2700
53	Շարժիչի յուղի արանքաչափիչի իրան	750	650
54	Կափույրի միջադիր	11500	9500
55	Քարտերի միջադիր	11000	10000
56	Շարժիչի բաշխիչ լիսեռ	40000	40000
57	Բ/լիսեռի կափարիչ	15000	15000
58	Բ/լիսեռի խտարուկ	5500	5000
59	Շարժիչի բ/լիսեռի ականոց	5500	5500
60	Շարժիչի բ/լիսեռի երիթակ	6000	6000
61	Ուղղորդիչ վռան	6000	6000
62	Շարժիչի գամասեղ	800	800
63	Գլխիկի միջադիր	7000	7000
64	Բաշխիչ լիսեռի այլումինե խցուկ /գազուշկա/	4500	4500
65	Ջրի շապիկի խցուկ /գազուշկա/	4000	3500
66	Հրիչի կարգավորող հեղուս	3500	3500
67	Հրիչի ձող /շտանգա/	4000	4000
68	Թափանիվի առանցքակալ	800	800
69	Վենեց	800	700
70	Յուղի ռադիատորի փողրակ	3500	3500
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
71	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	6000	4000
72	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	7000	5000
73	Յուղման համակարգի լվացման հեղուկ 1 լիտր	2000	2000
74	Յուղի գտիչ	3000	3000
75	Յուղի ռադիատոր	42000	40000
76	Վառոցքի կոճ	13000	13000
77	Արտածման կալեկտոր աջ	52000	48000
78	Արտածման կալեկտոր ձախ	52000	48000
79	Ներածման կալեկտոր աջ	55000	50000
80	Ներածման կալեկտոր ձախ	55000	50000
81	Արտածման կալեկտորի աջ միջադիր	8000	7500
82	Արտածման կալեկտորի ձախ միջադիր	8000	7500
83	Ներածման կալեկտորի աջ միջադիր	8000	7500
84	Ներածման կալեկտորի ձախ միջադիր	8000	7500
85	Վառոցքի մոմ	4000	4000

86	Բենզոբաքի բենզոմոնիչի ցանց	1000	1000
87	Ինժեկտորի բոցամուղ բենզինով շարժիչի	15000	12000
88	Բոցամուղի խտաբուկ	2700	2700
89	Վառելանյութի մղիչ էլեկտրական	25000	22000
90	Վառելանյութի գտիչ	5000	5000
91	Վառելանյութի խողովակ	1000	1000
92	Օդի գտիչ	4000	3500
93	Օդորակիչի գտիչ	4000	3500
94	Օդի ծախսաչափիչ	27000	23000
95	Օդի գտիչի փողրակ	3500	3200
96	Ջերմաստիճանային տվիչ	13000	10000
97	Յուղի տվիչ	13000	10000
98	Բաշխիչ լիսեռի տվիչ	30000	28000
99	Օդի ծախսի տվիչ	30000	28000
100	Արագաչափի տվիչ	11000	10000
101	Հովհարի տվիչ	10000	9000
102	Ջրի խողովակ երկար	6500	5000
103	Ջրի խողովակ կարճ	5500	4500
104	Ջրի տվիչ	9500	8000
105	Բենզոբաքի տվիչ	5000	4000
106	Մարման ընթացքի կարգավորիչ	11000	8500
107	Պարապ ընթացքի տվիչ	7000	6000
108	Թթվածնի տվիչ	17000	15500
109	Վառելիքի գտիչ /փոքր/	4000	3000
110	Էլեկտրական բենզամոնիչի կախոց	1000	1000
111	Մաքրելու հեղուկ ABRO 1 սրվակ	2000	2000
3. Սառեցման և արտածման համակարգ			
112	Հովհար	25000	22000
113	Ռ-ադիատոր	45000	36000
114	Ընդարձակող բաքի փական	2500	2000
115	Ընդարձակող բաքի փողրակ	2000	2000
116	Ընդարձակող բաք	12000	10000
117	Ռ-ադիատորի փողրակ ներքևի	6500	5000
118	Ռ-ադիատորի փողրակ վերևի	6500	5000
119	Թերմոստատ	13000	10000
120	Ջրի մղիչ	14600	12000
121	Ջրի մղիչի միջադիր	4000	3000
122	Ջրի պոմպի խտաբուկ	3800	3500
123	Ջրի պոմպի առանցքակալ	4500	4000
124	Սառեցման հեղուկ (անտիֆրիզ) 1 լիտր	2500	2500
125	Չսառչող հեղուկ ապակիների համար	2000	2000
126	Չգիչ հոլովակի	4700	4000
127	Փոկ մեծ	15000	12000
128	Հովացման համակարգի ռետինե խողովակ	9000	8000
129	Փոկանիվ գեներատորի փոկի	5500	3500
130	Միջադիր թերմոստատի	4800	3800

131	Իսլարարի ներդիր	3500	3000
132	Իսլարարի կախոց	4000	4000
133	Իսլարարի խողովակ	5000	5000
134	Կրոնշտեյն	1500	1500
135	Իսլարարի անուր (Խամուռ)	1500	1000
136	Իսլարար	35000	32000
137	Շարժիչ վառարանի	22000	20000
138	Վառարանի ռադիատոր	24000	22000
139	Ջգիչ հողովակի հեղույս	1800	1200
140	Շերտափեղկի ճուպան	2000	2000
141	Շերտափեղկ	1800	1500
142	Ռադիատորի դիֆուզոր պլաստմասե	11500	10000
143	Ռադիատորի դիֆուզոր երկաթե	13000	11000
144	Էլեկտրական հովհարի իրան	11500	10500
145	Ջեռուցիչի ռադիատորի էլեկտրական փական	5600	4800
146	Կոնդիցիոների կոմպրեսոր	60000	55000
147	Կոնդիցիոների ռադիատորի փողրակ	7000	6000
148	Առանցքակալ կոնդիցիոների	7200	5700
149	Կոնդիցիոների ռադիատոր	34500	32500
150	Կոնդիցիոների յուղ 1 լ	9500	7500
4. Փոխանցման տուփ			
151	Փոխանցման տուփի յուղ 1 լիտր	7500	7500
152	Փոխանցման տուփի յուղի գտիչ	13000	13000
5. Կցորդում			
153	Բաշխիչ տուփ		
154	Բաշխիչ տուփի կայունակ		
155	Բաշխիչ տուփի խտաբուկ		
156	Բաշխիչ տուփի առանցքակալ		
157	Բաշխիչ տուփի ատամնանիվ		
158	Բաշխիչ տուփի լիսեռ առաջնային		
159	Բաշխիչ տուփի լիսեռ միջանկյալ		
160	Բաշխիչ տուփի բարձիկ		
161	Բաշխիչ տուփի լիսեռ միջակա		
162	Բաշխիչ տուփի տվիչ		
163	Բաշխիչ տուփի շղթա		
164	Բաշխիչ տուփի երկժանի		
165	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմ		
166	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմ		
167	Բաշխիչ տուփի շարժաբեր		
168	Բաշխիչ տուփի դիֆերենցիալ		
169	Բաշխիչ տուփի դիաֆրագմաներ		
170	Բաշխիչ տուփի յուղ (կիսասինթետիկ 75/90)		
171	Կարդանային լիսեռ		
172	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ		
173	Կարդանային լիսեռի խաչուկ		
6. Առջևի և հետևի կամրջակներ			

174	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ		
175	Դիֆֆերենցիալ		
176	Դիֆֆերենցիալի սատելլիտ		
177	Տանող ատամնանիվի խցուկ		
178	Տանող ատամնանիվի առանցքակալ		
179	Դիֆֆերենցիալի առանցքակալ		
180	Ձախ կամ աջ կիսաստնու փոշեթիկնոց		
181	Կիսաստնի		
182	Կիսաստնու առանցքակալ		
183	Կիսաստնու միջադիր		
184	Կիսաստնու խցուկ		
185	Կարգավորիչ տափողակ		
186	Առջևի կամրջակի կիսաստնու գնդային հողակապ կարճ		
187	Առջևի կամրջակի կիսաստնու գնդային հողակապ երկար		
188	Առջևի կամրջակի կիսաստնու հողակապի խաչուկ		
189	Առջևի կամրջակի շրջադարձի բռունցք		
190	Առջևի կամրջակի շրջադարձի գնդաձև հենակ		
7. Կախոց			
191	Կրոնշտեյն	3500	3000
192	Անվակունդ	24000	22000
193	Անվակունդի խցուկ	6000	5000
194	Անվակունդի ներքին առանցքակալ	14000	12000
195	Անվակունդի արտաքին առանցքակալ	14000	12000
196	Հետևի անվակունդի առանցքակալ	13000	11000
197	Հարվածամեղմիչի թասակ	8000	6500
198	Զսպանակ	13000	11000
199	Առջևի հարվածամեղմիչ	38000	35000
200	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	5000	4000
201	Հարվածամեղմիչի վռան	5000	4000
202	Ներքևի լծակ	6000	5000
203	Ներքևի լծակի վռան	6000	5000
204	Գնդե հողակապ	7000	6000
205	Առջևի կայունարար	15000	13000
206	Առջևի կայունարարի վռան	6500	5500
207	Առջևի կայունարարի կանգնակ	9000	8000
208	Հետևի զսպանակ	14000	12000
209	Հետևի ցնցամեղմիչ	35000	30000
210	Հետևի մետաղաձող (շտանգա)	8500	7000
211	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	5500	5000
212	Հետևի անկյունագծային լծակ	14000	12000
213	Անկյունագծային լծակի վռան	6000	5000
214	Մեղմիչի վռան երկայթե համձուլվածքով	6500	5500
215	Հետևի կայունարարի վռան երկայթե համձուլվածքով	6500	5500
216	Հետևի կայունարարի վռան	5500	5000
217	Հետևի կայունարար	14000	13000
218	Անիվը ամրացման հեղույս 1 հատ	1500	500

219	Քսայուղ Լիտու 0.5կգ	1500	1500
220	Վերևի լծակի հեղույս	9500	8500
221	Ներքևի լծակի հեղույս	9500	8500
222	Վերևի կամ ներքևի հարվածիչ ռետինե բարձիկ	9500	8000
223	Անվաբացքի հեղույս 1 հատ	4500	4000
224	Անվակունդի դարձովի կանգնակ /կուլակ/	26000	23000
225	Զսպանակի մեկուսացնող ռետինե միջադիր	4500	3500
226	Հողակապի փոշեթիկնոց	6000	5000
227	Հողակապի վերանորոգման հավաքածու	6500	5000
228	Աջ կամ ձախ դարձկեն լծակ	7800	7000
229	Ստրուսիանկա	800	7000
230	Զսպակի ականջող /ուշկա/	800	700
231	Մեղմիչի ամրացման կալունակ	4000	3500
232	Մետաղաձողի հեղույս	4500	4000
233	Գնդե հողակապի կեղտապաշտպան ծածկոց սիլիկոնե	5000	4500
234	Պահպանիչ խուփ	5500	5000
8. Ղեկային մեխանիզմ			
235	Ղեկային կալուն	13000	10000
236	Ղեկային կալունի առանցքակալ	8000	7000
237	Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ	35000	35000
238	Ղեկային կալունի խաչուկ	8000	7000
239	Հիդրոուժեղարարի փոկ	8000	7000
240	Հիդրոուժեղարարի պոմպ	35000	32000
241	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	1000	1000
242	Ձգան մեջտեղի	10000	8500
243	Ղեկային ձող	12000	11500
244	Ղեկային ձողի ծայրակալ կ-տ	9500	8000
245	Աջ կամ ձախ ձգան	9000	8000
246	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	6000	6000
247	ՂԿ հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակ	22000	20000
248	ՂԿ հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակ	22000	20000
249	Աջ կամ ձախ կողային ձգան	9500	9000
250	ՂԿ ձողի տեղաշարժի մեխանիզմ	6500	6000
251	Հիդրոուժեղարարի յուղի տարա	6500	6000
252	Հիդրոուժեղարարի յուղի տարայի կափարիչ	3000	3000
253	Հիդրոուժեղարարի փոկանիվ	11000	10000
9. Արգելակային համակարգ			
254	Գլխավոր գլան	43000	38000
255	Գլխավոր գլանի վերանորոգման կոմպլեկտ	26000	25000
256	Վակուումային ուժեղարար	48000	45000
257	Բանվ. գլան	35000	33000
258	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	18000	16000
259	Արգելակային փողրակ	18000	15000
260	Սուպպորտ	22000	17000
261	Արգելակային հեղուկ	4500	4500
262	Առջևի արգելակային կոնդակների կոմպլեկտ	15000	12000

263	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	12000	9000
264	Առջևի արգելակային սկավառակ	17000	15000
265	Հետևի արգելակային սկավառակ	17000	15000
266	Ձեռքի արգելակի ճոպան	9500	8000
267	Վակուումային ուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	3500	3000
268	Ձեռքի արգելակի լծակ	7500	6500
10. Էլեկտրասարքավորում			
269	Գեներատոր	45000	42000
270	Մարտկոց /հիմնական, 12 վոլտ/	35000	30000
271	Գեներատորի դիոդային կամրջակ	14000	12000
272	Գեներատորի ռելե	6000	5500
273	Գեներատորի առանցքակալ	5000	4500
274	Գեներատորի խարիսխ	10000	10000
275	Գեներատորի խարիսխի հետևի պլաստմաս	5000	5000
276	Գեներատորի առջևի իրան	6500	5000
277	Գեներատորի ետևի իրան	6500	5500
278	Գեներատորի փաթույթ	12000	12000
279	Գեներատորի փոկանիվ	9500	9000
280	Գեներատորի կալունակ	6500	6000
281	Գեներատորի կոլեկտոր	6500	5500
282	Ստարտեր	30000	28000
283	Ստարտերի ռելե	6500	5500
284	Ստարտերի ածուխ	6500	5500
285	Մեկնարկիչի առջևի իրան	6500	5500
286	Մեկնարկիչի ետևի իրան	6500	5500
287	Մեկնարկիչի բրոնզապատ վռաններ	4500	4500
288	Մեկնարկիչի խարիսխ	12000	10000
289	Մեկնարկիչի մագնիս	6500	5500
290	Մեկնարկիչի թաթիկ	6500	5500
291	Բենդեքս	9500	9000
292	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	9000	9500
293	Առջևի լապտեր	55000	50000
294	Հետևի լապտեր	40000	35000
295	Հակամշուշային լապտեր	20000	18000
296	Առջևի թարթիչ	8000	7000
297	Խցիկի լապտերի լամպ	300	300
298	Առջևի թարթիչ լապտերի լամպ	500	500
299	Հետևի թարթիչի լապտերի լամպ	500	500
300	Հետևի լապտերի լամպ	1500	1500
301	Հակամշուշային լապտերի լամպ	2500	2500
302	Արգելակային լապտերի լամպ	1000	1000
303	Առջևի լապտերի լամպ	2500	2500
304	Էլեկտրական անջատիչ	3000	3000
305	Էլեկտրական տվիչ	3000	3000
306	Ապակեմաքրիչ	2000	2000
307	Բռնկման կողպեք	16000	15000

308	Էլեկտրապարենի գլխավոր խումբ	50000	46000
309	Էլեկտրապարենի ենթաբաժնի խումբ	22000	18000
310	Վառքայանքի բաժնի խումբ	5000	5000
311	Վառքայանքի մոմի ծայրակալ	3000	3000
312	Վազբաշատի ճուպան	9500	8500
313	Վազբաշատի իմպուլսի տվիչ	22000	21000
314	Դռան կողպեք	16000	13000
315	Ազդանշան	10000	10000
316	Ապակեվազիչի բաշոկ	12000	10000
317	Ապակեվազիչի շարժիչ	11500	10500
318	Ամպերմետրի ցուցիչ	3800	3500
319	Վառելիքի ցուցիչ	7000	6500
320	Ջրի ցուցիչ	13000	12000
321	Յուղի ճնշման ցուցիչ	21000	17000
322	Պրիբորի ցուցիչի լամպ	500	500
323	Վառելիքի բաքի չափիչ	5000	5000
324	Էլեկտրաամբարձիչների անջատիչների բլոկ	8000	8500
325	Դռների կենտրոնական փական	30000	25000
326	Հայելի կողային	30000	25000
327	Ազդանշանային համակարգ	10000	10000
328	Դռան ապակու ամբարձիչ	18000	17000
329	Դռան ապակու Էլեկտրաամբարձիչի շարժիչ	9500	9000
330	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր 1 կտորի վերանորոգման համար	7500	7500
11. Թափք			
331	Հագոցի ճուպան	5500	4500
332	Հագոցի կողպեք	8000	7000
333	Հագոցի մեղմիչ	9500	8500
334	Ռետինե գորգիկներ կ-տ	10000	10000
335	Դիմապակի	35000	35000
336	Դռների ապակի	20000	20000
337	Հետնի ապակի	25000	30000
ԸՆԴԱՄԵՆԸ		5294600	4997300
Ընդամենը բոլոր ավտոմեքենաների միավոր առավելագույն գների հանրագումարը/ՀՀ դրամ		10291900	

1. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:
2. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրը առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և երկու օրացույցային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:
3. Կատարողը պարտավոր է SU-2 ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա երաշխավորված այլ արտադրության պահեստամասեր և քսայուղեր՝ ինչպես նաև Պատվիրատուի պահանջով տրամադրել դրանց ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի պատճենը:
4. Պետք է ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողությամբ:
5. Օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային արտադրության:
6. Մեքենաների շարժիչների կապիտալ վերանորոգման երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս, փոխանցման տուփերի, կամրջակների և դեկային կալունի կապիտալ վերանորոգման երաշխիքային ժամկետը՝ 6 ամիս:
Սպասարկման կայանը պետք է ունենա բարձր որակավորմամբ հետևյալ ավտոտեխսպասարկման մասնագետներ.
 1. Շարժիչագործ
 2. Փոխանցման տուփ և կամրջակ վերանորոգող
 3. Ավտոէլեկտրիկ
 4. Կուկանացնող և կարգավորող
 5. Թափի վերանորոգող և ավտոներկարար
 6. Ավտոընթացագործ և այլ մասնագետ:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ
Հասցե՝ ք.Իջևան, Սահմանադրության 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 900371051039
 07628257
Արման Գևորգյան
 /ստորագրություն/
 Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԱԶ Մելիք Ահարոնյան
Հասցե՝ ք.Իջևան, Արցախյան 4/3
Կոնվերս Բանկ ՓԲԸ
 1930045519020100
 70930303
Մելիք Ահարոնյան
 /ստորագրություն/
 Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

			Ծառայության													
հրավերով ախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	50111130-1	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ		102020	102020	229545	229545	229545	357070	357070	357070	510100	510100	510100	510100	510100

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
 ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ
 Հասցե՝ ք.Իջևան, Սահմանադրության 1
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 900371051039
 07628257
 Արման Գևորգյան
 /ստորագրություն/
 Կ.Տ



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
 ԱՁ Մելիք Ահարոնյան
 Հասցե՝ ք.Իջևան, Արցախյան 4/3
 Կոնվերս Բանկ ՓԲԸ
 1930045519020100
 70930303
 Մելիք Ահարոնյան
 /ստորագրություն/
 Կ.Տ

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն